ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-4-4-Ա

ք. Երևան 31.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 31-ի նիստում քննարկեց 2023 թվականի մարտի 13-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Montres Tudor SA ընկերության (Rue François-Dussaud 3 CH-1211 Genève 26, CH) «TUDOR» (IR1623725) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները և հաշվի առնելով, որ հայտատուն հրաժարվում է «MASTER CHRONOMETER» արտահայտության նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին առանց «MASTER CHRONOMETER» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն տրամադրելու:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության

գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Montres Tudor SA ընկերության «TUDOR» (IR1623725) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «TUDOR» ապրանքային նշանը գրանցել «MASTER CHRONOMETER» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ